ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 498-Ա

«19» մայիսի 2025թ.

ՀՐԱՄԱՆ

ՌՈԶԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ 94-30.4-Մ6-1) ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետը, ինչպես նաև 2025 թվականի մայիսի 16-ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի հարցազրույցի մրցութային հանձնաժողովի եզրակացությունն ու Ռոզա Աբրահամյանի անձնական դիմումը

հրամայում եմ՝

1. Ռոզա Աբրահամյանին 2025 թվականի մայիսի 20-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մասնագետի (պաշտոնի ծածկագիրը՝ 94-30.4-Մ6-1) պաշտոնին՝ 6 ամիս փորձաշրջանով:

2. Փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Վարդինե Դադոյանին:

Փորձաշրջանը համակարգող Վարդինե Դադոյանին՝ առաջնորդվել առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածով:

3. Ռոզա Աբրահամյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ք. Գավառ